Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 23 դեկտեմբերի 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-186/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար հակահրդեհային դռան և հրշեջ ծայրապանակի ձեռքբերման նպատակով 2024 թվականի նոյեմբերի 5-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-186/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև ZONE51-ը (մասնակցի անունը գրված է այնպես, ինչպես գրանցված է e-Auction կայքէջում), որը ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը:

Փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ ZONE51-ի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել, ինչպես նաև բացակայում է վերը նշված մասնակցի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների փնտրման համակարգում և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն ZONE51-ին առաջարկվել է շտկել նշված անհամապատասխանությունները, սակայն մասնակցի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները: Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ZONE51-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և ZONE51-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**